



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 30 » դեկտեմբերի 2021թ. 209-Ջ

ք. Երևան

**«ԱՐՑԱԽ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՇ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆԱՑՈՒՑԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի N377-Ա առ 14.06.2021թ. «Արցախի Հանրապետությունում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության մասնաճյուղ ստեղծելու, մասնաճյուղի կանոնադրությունը հաստատելու մասին» հրամանը և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել «Արցախ» մասնաճյուղի կողմից մատուցվող ԱՀ տեխնիկական պայմանների (փոփոխության) փորձաքննության աշխատանքների գնացուցակը համաձայն՝ Հավելված 1-ի:
2. Սահմանել «Արցախ» մասնաճյուղի կողմից կազմակերպության ստանդարտների տեխնիկական պայմանների մշակման վերաբերյալ խորհրդատվական աշխատանքների գնացուցակը համաձայն՝ Հավելված 2-ի:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՏՆՕՐԵՆ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

ԳՆԱՑՈՒՑԱԿ

ԱՀ տեխնիկական պայմանների (փոփոխության) փորձաքննության աշխատանքների

Էջերի քանակը	Սննդարդյունաբերության արտադրանք, թեթև արդյունաբերության և լայն սպառման արտադրանքներ (ՀՀ դրամ)	Քիմիական արդյունաբերություն և շինանյութերի արտադրանքներ (ՀՀ դրամ)	Մեքենաշինության, սարքաշինության, էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի արտադրանքներ (ՀՀ դրամ)
0-20	25000	30000	40000
21-50	35000	40000	50000
51-100	45000	50000	60000
101-150	60000	60000	70000
151 -ից ավելի	70000	80000	90000

Ծանուցում՝

1. ԱՀ տեխնիկական պայմանների փոփոխությունների փորձաքննության համար հաշվարկվում է միանվագ 10000 դրամ գումարած 1000 դրամ յուրաքանչյուր էջի համար:

2. ԱՀ տեխնիկական պայմանների հայերեն տարբերակին համապատասխան ռուսերեն և (կամ) անգլերեն բնագրաբնույթ տեքստերի փորձաքննությունը հաշվարկվում է Աղյուսակում նշված տվյալ տեխնիկական պայմանի փորձաքննության արժեքը բազմապատկելով 1.5 գործակցով՝ յուրաքանչյուր լեզվի համար:

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Կազմակերպության ստանդարտների ԱՀ տեխնիկական պայմանների
մշակման վերաբերյալ խորհրդատվական աշխատանքների

Մեքենաշինության, սարքաշինության, էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի արտադրանքներ (հազ.դրամ)	Շինանյութերի և քիմիական արդյունաբերություն արտադրանքներ (հազ.դրամ)	Սնդարդյունաբերության արտադրանք, թեթև արդյունաբերության և լայն սպառման արտադրանքներ (հազ.դրամ)
25.0	20.0	15.0